

ՔՍԱՆԵՐԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գին 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՔՕՆ № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Խմբագրությունը ընդունւում է ամեն լիզուով:

Խմբագրությունների համար վճարում են
իրաւաւորութիւն ըստ 12 հոկտեմբ.
ՏԷԼԷՔՕՆ № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԲԱՐՇԵՆԻ

ԲՈՂԱՆԻՍԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Նոր պայմաններ. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբա-
գրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տարեկան
լուր գէտ կուրսու կոմպլէս. Արտաքին լուրեր.
— ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ. — ՅԱՅԱՍՏԱՆԻՆԵՐԻՆԵՐ.
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիֆլիսից:

ՆՈՐ ՊԵՏԱՆԵՐ

Փորը-Ասիայի մէջ սկսել են երեւոյ մի
շարք արդիւնաբերական ձեռնարկութիւն-
ներ, որոնց մի մասը պատկանում է եւ-
րոպացիներին, իսկ միւս մասը տեղական
ժողովուրդին: Հայերը գեալ են կարողացել
այդ նոր սկսած շարժման մէջ պատկա-
ռելի տեղ գրաւել. նրանք գործում են
գաւառից և անհամարձակ: Նիշը է, Բրուս-
սայի շրջակայքում նրանք առաջ տա-
րան շերտի սերմ պատրաստելու գործը
և ստեղծել են արտադրութեան ներթ-
դէպի Ռուսաստան. երկրի խորքերում նը-
րանք յայտնի առաջադիմութիւն արին
մանուսագործութեան մէջ. Սեւանայի մէջ
նրանք բաց արին գորգագործութեան ար-
հեստանոցներ. Եգիպտոսի մէջ ծրագրել են
մշակում փետր գործարան բանալու հա-
մար են այլև, բայց դրանք սկզբնական
բայլեր են, որոնց պէտք է հետևի եռան-
դուն և ընդարձակ գործունէութիւն, որ-
պէս զի եւրոպական մեծ մրցումը չը
խեղդի ամեն մի կողմնակի փորձ:

Յայտնի տեսող դէպքերից յետոյ եր-
կիրը թէ և չէ բարեկարգվել, բայց հան-
գստացել է և առօրեայ կեանքը մտել է
իր սովորական ընթացքի մէջ: Սակայն
ասպարէզ է եկել մի հանգամանք, որ ո-
րոշ փոփոխութիւն պահանջ է ներթափ-
ել երկրի տնտեսական-վարչական գործը: Սու-
թանի յատուկ իրաւէրդ Փորը-Ասիայի եօթ
նահանգների տուած եկամուտը այսուհե-
տե պէտք է հասնի օսմանեան բանկին:
Հարկահանները և զանազան տեսակ տուրք
ժողովուրդները հեռացվում են և նրանց
տեղ կը նշանակվեն օսմանեան բանկի
պաշտօնականները: Այդ եօթ նահանգներն
են՝ Բրուսսայի, Սեւաստիայի, Կասաբլան-
կի, Զմիւռնիայի, Ադանայի, Ղոնիայի և
Հալեբի: Այդ փոփոխութիւնը առաջ է
եկել իբրեւ հետեանք ռուսաց կառավա-

րութեան արած խիստ պահանջներ: Այդ
նահանգների եկամուտը պէտք է գործա-
դրվի շինարարական այն գումարը, որ օս-
մանեան պետութիւնը պարտ է Ռուսաս-
տանին վերջին պատերազմի ժամանակից:
Անկասկած, օսմանեան բանկը կը վերաց-
նի տուրքերի հաւաքման այն դժբաղդ
օրիւնները, որ մինչև այժմ ընդունված էր.
Հարկահանների ծրագրային տրակի տեղ նա
կը դնի աւելի բարեխիղճ պաշտօնական
և կը հսկի նրանց գործառնութիւնների
վրա, որպէս զի կեղեքումները, կաշառա-
կերութեան և կամայականութեան առաջն
առնի: Այդպիսով, եթէ ոչ քաղաքական
խեղաքիութիւնը, գոնէ ֆինանսական հան-
գամանքները ստիպել են ձախտագրական
ոյժով իրագործելու աւելի կանոնաւոր
տնտեսութիւն երկրի մէջ: Անշուշտ, տուր-
քերի կանոնաւոր հաւաքումը մի նոր հա-
րստութիւն է բերում երկրին, բայց նա
կանոնաւորութեան հաստատումն է, որ
այնքան կարևոր է տնտեսական գործառ-
նութիւնների համար:

Այդ կանոնաւորումը մի կողմից, երկա-
թուղիների մի ամբողջ ցանցի երեւոյ
միւս կողմից, պատրաստում են հող նոր
արդիւնաբերական կեանքի համար: Տե-
ղական ժողովուրդի բանիմաց մասը պէտք
է օգտվի այս հանգամանքից և լուրջ կեր-
պով առաջ մղի տեղական արդիւնաբե-
րութեան զարգացման հարցը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ինչպէս և պէտք էր սպասել, ռուսաց երկու
մայրաքաղաքների բոլոր այն թերթերը, որոնք
լոյս տեսան մայիսի 26-ին, ամբողջովին նուիր-
ված են Պուշկինին: Տօնը, ուրեմն, կատարելա-
պէս ազգային էր ամբողջ Ռուսաստանի համար,
մի տօն, որ իր վիթխարի չափերով վերին աս-
տիճանի փառանք տեսարան է ներկայացնում:
Նա միայն չէր ամբողջ ազգը, չէր նախաձեռնա-
կարգերի, կուսակցութիւնների, ուղղութիւնների
խորհուրդների, մի ընդհանուր դրացմունքի, մի
համատարած հրճմունքի մէջ: Պա այն դիւթա-
կան ոյժն է, որ երկրինք է նուաճում և որի
անուշը մտաւոր հանձար է: Հանձարեղ անհատ-
ներին համարեա ամեն տեղ վիճակված է իրանց
կենդանութեան ժամանակ կրել ամեն զրկանք,
յաճախ նաև հալածանքներ: Բայց մտքի նրա-

յաղորդ ոյժը հենց այն է, որ նա մոխրների
տակ չէ թաղվում և յարուցում է առնում իր
հերոսին անմահացնելու համար: Տօնելով այդ
հերոսին, մարդկութիւնը իր հիացմունքն է մա-
տուցանում հանձարեղ, ստեղծագործող մտքին:
պաշտամունքը դարձած անուշը, որ կապված է
այս կամ այն գաղափարական հասկացողու-
թեան հետ, ամենալաւ կոթողն է, որ տնկվում է
երկրի տակ: Երկրի տակ առաջադիմութիւն, միշտ
և անդադրող դէպի կատարելութիւն դիմելու
ձգտումը նուիրագործելու համար: Այդ կողմից
Պուշկինեան տօնելը մի շատ խոշոր երևոյթ են
ռուսաց կեանքի մէջ: Բայց կայ մի հանգա-
մանք, որ այդքան հանդիսաւոր տօնին աչք է
ծակում: «Русскія Вѣд.» լրագիրը, խօսելով մա-
յիսի 26-ի նշանակութեան մասին, գտնում է
որ այդ օրը, ի հարկէ, համազգային փառանք
տօն է: Եւ սակայն

Ի պատիւ Պուշկինի այժմ պատրաստվող
հանդիսաւոր նիստերից և ոչ մէկը նշանակու-
թեան կողմից չէ կարող համեմատվել 1880
թ.ի հուլիսաւոր նիստերի հետ (երբ Պուշկինի
արձանն էր բացվում Սոսկվայում) և այդ
այն պատճառով, որ այժմ չը կան խօսքի և
մտքի այնքան նշանաւոր գործիչներ, որոնք
այն ժամանակ այնպէս միաբան հաւաքվեցան
Պուշկինի տօնին:
Իւ իրաւ, հանդէսները, ուրախութիւնները,
ճառերը չը պիտի մոռանային այն հանգամա-
նքը, որ զրական այդ տօնախմբութեան զարդերը
այժմ չեն կարում այնպիսի մարդիկ, ինչպէս
էին 1880-ին Տուրգենեւի, Դոստօեւսկի, Սալտի-
կով, Գոնչարով: 19 տարի է անցել այդ օրից,
բոլոր այդ ոյժերը գերեզման են մտել և սակայն
չը կան նրանց յաջորդները, չը ծնվեցան նոր
խոշոր տաղանդներ, որոնք կարողանային հո-
ւանքներ ստեղծել, ուղղութիւնների տէր դառ-
նալ: Ինչպէս է այդպէս: Միթէ Պուշկինեան տօ-
նախմբութիւնները բաւական ապացոյց չեն, որ
տաղանդը արդէն անագին նուաճումներ է գոր-
ծել: 1887 թ.ին լրացաւ Պուշկինի մահվան յիս-
նամեակը և նրա բոլոր գործածները դարձան
հասարակութեան սեփականութիւն, լոյս տեսան
այդ գործածների բազմաթիւ էժանագին հրա-
տարակութիւններ, որոնք հարկւր հաղարներով,
միլիոններով տարածվեցան ռուս ժողովուրդի մէջ:
«Русскія Вѣд.» շատ ճիշդ է նկատում, որ այդ
հանգամանքը մի անագին յեղափոխութիւն ա-
ռաջացրեց Ռուսաստանի գրականութեան
գործում: Պուշկինը իր գերեզմանից ցոյց
էր տալիս, թէ ինչպէս կարող է անել էժան գի-
րք, որպիսի վիթխարի արժեքներով նա կարող է
հեղեղել ընթերցանութեան կարօտ, տղամ ժողո-
վուրդը: Եժան գրքի գաղափարը դարձաւ չա-

փազանց հասկանալի, չափազանց հրատապ: Եւ
սկսվեցին էժան հրատարակութիւնների ամբողջ
շարքեր. երևան եկան հրատարակչներ, որոնք
նշանաւոր վարձատրութիւն տալով հեղինակնե-
րին, դարձանալի էժան գնով վաճառ էին հա-
նում նրանց հեղինակութիւնները, այն միանգա-
մայն անսխալ հաշուով, որ էժան գիրքը, այնու-
ամենայնիւ, կը հանէ բոլոր ծախսերը և նոյն
իսկ օգուտ էլ կը բերէ, քանի որ էժանութիւնը
տարածման առաջին պայմաններից մէկն է: Եւ
այսպէս, մի շարք վերին աստիճանի նը-
պաստաւոր պայմաններ. կայ գնահատութիւն թէ
բարոյական և թէ նրկական, բայց չը կան այդ
գնահատութեան բարձր չափերին արժանի տա-
ղանդներ: Ակամայ գալիս էք այն եղբակացու-
թեան, որ տաղանդներ ծնունդը բոլորովին կապ
չունի այդ արտաքին պայմանների հետ: Եթէ այդ-
պէս չը լինէր, մենք պիտի տեսնէինք, որ հրատարա-
կչները, հասարակութեան գիտակցութիւնը և պա-
հանջները պիտի լոյս հանած լինէին մի շարք այն-
պիսի ռատուածային կայծեր, որոնք կարողա-
նային իրանց ժամանակի մարդարէն դառնալ:
Մեր ժամանակը այնքան առաջ է գնացել, որ
այսօր ռուս հեղինակը իր մի ոչ այնքան մեծ
վէպի համար 12,000 ռուբլի վարձատրութիւն է
ստանում: Բայց թվ է այդ հեղինակը: Նա դը-
րական աշխատանքի այնքան նպաստաւոր հան-
գամանքներից ծնունդ առած մէկը չէ, այլ օժե-
րերից, այն ժամանակի մարդկանցից, որ Տուր-
ցույ, Բէլինսկի, Տուրգենեւի ծնելու բախտն ու-
նէր: Իսկ թէ այդ ինչ տեսակ բախտ է—մենք
չենք կարող որոշակի ասել. բայց հանդիմա-
նք, որ գրական գործիչի ապանալութեան,
հարստութեան, նրկական յարմար պայմաննե-
րի, հասարակութեան պատրաստակամութեան և
այլ այսպիսի բաների հետ կապ չունի այդ
բախտը: Եւորժը, տաղանդը ոչ գնել կարելի է,
ոչ փողով ստեղծել...

ՆԱՄԱԿ ԱՅԻՆԱԿԱՆՔԻՑ

Մայիսի 24-ին

Վաչխառութեան դէպ մղվող կուրս մեր դա-
ւաւում մտնում է նոր, աւելի զրական ֆազի
մէջ: Մայիսի 21-ին, տեղական հայտարար
դատարանի վճիռ համաձայն, վաչխառութեան
պատճառով բանտարկվեց Զանդուրա գիւղացի
Յակովբ Քաւալազեան, որ ժողովրդին աւելի
յայտնի է Կօստաշ առնունով: Սրա մի ազգա-
կանը, որ Դեկտեմբերի հասարակութեան տանու-
տէր էր և ժայռից ընկաւ ու մեռաւ, ինչպէս
յայտնի է, նոյնպէս մղադրվում էր վաչխա-

կը գումարով պահանջուած այդ Խառն ժողովը
և Ստեփան փաշա Ասլանեան, դադարեց
պարզելով, յանկարծ ժողովին մէջ հարցում
կուղղէ պատրիարքութեան հետ, փառաբանելի
քաջահոգութիւն ժընորին սրբազնու-
թեան, որ պատճառ եղած էր Վիլիկիոյ խեղճ
ժողովրդեան երեք տարի է վեր անուէր և կա-
թողիկոսական աթոռին թափուր մնալուն: Եւ
թվ չէր գիտել թէ Ալեքսանդր Եպիսկոպոսի օ-
րինաւոր ընտրութեան ապօրէն բեկանումովը
ալ խնդիր չէր մնացել ազգին և սուլթանին
միջև. միւս պատճառները, որ ցայս վայր յերե-
ւան եկեր էին նոր: Գ ընտրութեան յետաձգման
համար, բարուրանքներ էին՝ Օրմանեանի կողմ
ստեղծուած, միայն ժամանակ անցնելու և իր
փառաբանելի կամքը յաւաք տանելու համար:

Բայց ան յանկարծ դադարեց զուր կենէ:
Արմաւիրի ժողովի երկու ատենապետ Եպիսկո-
պոսները՝ Գրիգորիս Յօսանէլեան ու Վահրամ
Մանուկիս իրար հակադէմ. ազգային դարաւոր
իրաւասութիւն մը Լօյսայի աշակերտի մը կամ
բնի ու քաջաճոյնի գոնէ խղճի դէպ կը համա-
բնի. կը զգան այս ազգադաւ demarche-ներուն
ծանր հետեանքը, կը դիմեն քաղաքական ժո-
ղով երկրորդ ատենապետ Ասլանեան Ստեփան
փաշայի (ինչպէս յայտնի է, Տառնանի դիմե-
լու ժամանակին անցեր էր) և կը պահանջեն, որ
Խառն ժողովը գումարով անմիջապէս:

Արդարև Զատիկն մէկերկու շաբաթ առաջ

Բարեբաղդաբար Զատիկն ու ժողովներու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Թ Ի Ի Գ Ի Ա Յ Ի Ց

I
4. Պոլիս, 30 ապրիլի
Դարձեալ Կիլիկիոյ կաթողիկոսա-
կան խնդիրը

Կը խոստովանիմ, որ բաւական ընդհատեցաւ
թղթակցութիւններու շարունակութիւնը: Զա-
տիկ ու զատկական հանդէսներ, հանդիսաւոր
պատարագներ ու պերճախօս քարոզներ, ըն-
դունելութիւններ ու հանդիսաւոր շողորթութու-
թիւններ, ճառեր ու ատենաբանութիւններ
պատարիարքարանի մէջ՝ կեղծիքներով լեփեցուն:
որոնց լոկ դերասանական լինելը նոյն իսկ
խօսողներն ալ գիտեն և ասոնցմէ դատ և ո-
չինչ՝ որ արժէր գրելու, ընդհատեցին արդարեւ,
պահ մը, թղթակցութիւններու շարքը, բայց
ինչոյր մը, որ ժամանակ մը ի վեր մեռած
կը կարծուէր, Կիլիկիոյ կաթողիկոսութեան սն
սրտմաշուկ խնդիրը՝ զոր անշուշտ չեն մոռցած
«Մշակի» ընթերցողները և կը հետաքրքրվին ի-
մանալով՝ թէ ո՞ր մնաց այդ «երիցս երանեալ»
կաթողիկոսութիւնը, նորէն յարութիւն առաւ
իր աճիւններէն՝ իր հետաքրքրական կողմերով,

որոնց նկատմամբ պարտք կը համարիմ մէկ
քանի կարևոր տեղեկութիւններ ընծայել:

Ի հարկէ կը յիշէր այս հարցի առկա նախ-
ընթացք թղթակցութիւններու, որ, զուշակաբար,
կը յանգէին սն կէտին, թէ Օրմանեան պատ-
րիարքը՝ համաձայնութեամբ տիրող իշխանու-
թեան, կը նկատի միացունել Կիլիկիոյ կաթո-
ղիկոսութիւնը Թիւրքիոյ հայոց պատրիարքու-
թեան հետ՝ իր անձին վրա, պայմանաւ՝ որ
լինք Կ. Պոլիս մնայ և կաթողիկոսական աթոռը
կառավարէ ի հեռուստ փոխանորդի կամ տե-
ղակալի մը միջոցաւ՝ ճիշդ ինչպէս կրնէր իր
ողորմած-հողի college-ը՝ կաթողիկոս—պատ-
րիարք Ազարեանի և ինչպէս պիտի ընեն շա-
րունակաբար անոր յաջորդները:

Տարիէն աւելի էր, որ Օրմանեանի ու Նը-
ղըս-Քէօսքի միջև տեղի կուենային այս բանակ-
ցութիւնները, որոնց միակ դերակատարն էր
Տառնան Թարութիւն փաշա և համաձայնութիւն
պալ գոյացած էր, միայն թէ գործը դադարէ կը
պահվէր ու վարդապետութեամբ կը ձգձգվէր՝ խա-
բեպատիր պատճառներ ստեղծելով և ժողո-
վուրդը ընացունելով:

Օրմանեան պատրիարքը՝ իր աստուածաբանա-
կան բովանդակ կարողութիւնով չէր կրցեր
զօրադրաբար, ուսումնասիրել թէ «Որդիք
մարդկանց իմաստնագոյն են քան զօրդիս լու-
սոյ՝ յաղա իրենանց», ըստ որում և իր շուրջը
գտնվողները կարող էին լսելով ծակէն իսկ

կայ յունիսի 15-ից և կը շարունակվին մինչև օգոստոսի 1-ը: Դասախօսութիւնները ձրի են և նրանց կարող են լսել բոլոր ցանկացողները: Այն անձինք, որոնք դասախօսութիւնները լսելուց յետոյ կը ցանկանան ստանալ վկայական, պարտաւոր են ենթարկվել յատուկ հարցաքննութեան:

Մեզ հաղորդում են, որ Հիւսիսային Կովկասում արած բազմաթիւ փորձերը ցոյց տուին, որ մորեխը կոտորելու համար անդոր է Պարիզի կանաչ կոշիկած բաղադրութիւնը:

Քիֆիսի Բօտանիկական այգին այժմ սկսել է դառնալ մասնագէտների ուշադրութիւնը: Այգին բուսցնում է Կովկասի բոլոր յայտնի բույսերը և փորձում է ընտելացնել օտար երկրի բույսերը: Նորերս ծանօթացան այդ այգու հետ յայտնի այդեգործ Գրաբովսկի և զենեքալ Կորոլովի, որի նախաձեռնութեամբ այժմ տնկվում են առանց ջրի անտառներ:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԶԻՑ մեզ հաղորդում են, որ այս տարի Հիւսիսային Կովկասում սպառվում է մրգատու ծառերի առատ բերք: Միջանոսների դէմ գործադրվեցին յայտնի միջոցները—օրինակ Պարիզի կանաչը, մեծ աղողութեամբ:

ՂՈՒԲԱՍԻՑԻ մեզ գրում են. «Մայիսի 26-ին ռուսաց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց ռուսաց բանաստեղծ Պուշկինի համար: Մահվան հարիւրամակը կը տօնեն առանձին. Քիֆիսից պիտի գայ ռուսացի Գամբելէի, որն այդ գործի ձեռնարկողն է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՅԻ ԴԵՄ ԿՈՒԵԼՈՒ ԿՈՆԳՐԵՍ

(Նամակ Բերլինից)

Ամենից առաջ խօսեց զօրութիւնը Ռօթ Վոլքերի կողմէն: Դէ մը առաջ ելաւ միջոցները մասին ընդհանրապէս:

Մեծաառաջին գործը պէտք է լինի փոքր տարիքաւորների մէջ եղած հիւանդութեան առաջնաւոր: Սրա մասին խօսելով, պրօֆէսոր Հիլքենը շեղում է, որ տուբերկուլոզը հէից մի տարեկան հասակումն ևս երևան է գալիս, այդ հետազոտութիւնները ցոյց են տալիս, թէ շուրջ հասակի երեխաները վարակվում են և ոչ թէ այդ հիւանդութիւնը ժառանգում. պէտք է զգուշանալ երեխաներին համբուրելուց և կերակուրները համառոտ անելուց: Տուբերկուլոզով հիւանդ ծնողները խիստ զգուշութեամբ պէտք է բանեցնեն. աւելի լաւ է այդ զէպքում երեխաներին ուրիշ տեղ խնամելու յանձնել: Մի մեծ բարեգործութիւն է թրքախօսի հիւանդ մայրերից երեխաներին հեռացնելը և լաւ կազմակերպված խնամարաններ հաստատել, այնտեղ պահելու համար, զոնէ նրանց կաթնակերութեան ընթացքում: Թրքախօսուոր ծառայողներից և խնամակալներից ևս խիստ պէտք է զգուշանալ: Մանկապարտէզները, որբանոցները, պանսիօնները, հիւանդանոցները խիստ հակողութեան պէտք է ենթարկվեն: Երեխաներին լաւ կերակրելով, ազատ օդում խաղացնելով ու կրթելով կարելի է հիւանդանալու տրամադրութեան առաջնաւորներ:

Տուբերկուլոզը հիւանդների առաջնաւորութեան վտանգների մասին խօսում է պրօֆէսոր Գիլքենը: Նա հիշելով իր հետազոտութեան վրա, թէ մահվան դէպքերի լինելը արագեւրութիւն կայ այն ամուսնութիւնների ժամանակ, երբ աղամարդը տուբերկուլոզով հիւանդ կին է առնում կամ հակառակը, ճառախօսը եղբակացնում է, որ, առողջ ամուսինը վերանայում է հիւանդին և այս երկուսի դրութիւնը այնքան վտանգաւոր է, որքան ամուսնական վատ պայմանների մէջ են ապրում: Տուբերկուլոզը կարելի է դրանց թիւը ընդհանր. նախ՝ չը պէտք է դրանք շատ կանուխ պատկերել և ապա պէտք է ստիպել այնպիսիներին, որոնք տուբերկուլոզով տառապում են, զոնէ այնքան ժամանակ չամուսնանան, մինչև մի որոշ վտանգաւոր աստիճան չէ անցել: առողջացածները լաւ է, որ առնուազն երկու տարի ևս համբերեն մինչև ամուսնանալը: Տուբերկուլոզները ամուսնանալուց յետոյ ևս ամենախիստ զգուշութիւն պէտք է բանեցնեն, և այդ զգուշութիւնը ոչ միայն ընտանիքի անդամներին է վերանայել փրկում, այլ և հիւանդի կեանքը քաղցրացնելով, կը նպաստէ նրա առողջանալուն:

Պրօֆէսոր Ռուբենը խօսում է Տուբերկուլոզի դէմ առնելու մասին, ի նկատի առած բնակարանները և աշխատանքները:

Որոշակաբար կան ընդհանրապէս, որ ամենախիստ ազդեցականութիւնն է ապրում, ամենաշատ թրքախօսութեան ունեն: Տուբերկուլոզը իր զոնքերի ամենամեծ մասը տանում է մանաւանդ այն գործաւորներից, որոնք մշտապէս փակ շինութիւններում են ապրում: առաջադիւրս, ժողովրդի միջակ դասակարգը առողջապահութեան պարելու վրա ուշք չէ դարձնում: Բոլորովին վատառողջ բնակարաններում են ապրում գործաւորները. ընտանիքի մէջ երկու անձանց իրար հետ մի անկողնում պառկելը, որ յաճախ դեռ սովորութիւն է, կապված է մեծ վտանգների հետ. բնակութեան վատ յարմարութիւնները տուբերկուլոզի համար տրամադիր հող են պատրաստում, նուազեցնելով մարդկանց մարմնի դիմադրի ոյժը. բնակարանների բարեկարգութեան խնդիրը լուրջ ուշադրութեան պէտք է առնել:

Պրօֆէսոր Ֆօն Լէյպը զեկուցանում է հիւանդանոցներում տուբերկուլոզի տարածումն արգելելու միջոցների մասին:

Մեծ ծախսարութեամբ ընդունվում է յաջորդ ճառախօսը, պրօֆէսոր Ռ. Վիլսոնը, որը խօսում է տուբերկուլոզի առաջնաւորների մասին, ի նկատի առած սնունդի միջոցները: Բոլորովին պարզված է, որ տուբերկուլոզի վարակումը տեղի է ունենում դրսից և ոչ թէ մարմնի մէջ է զոյանում: Հին հուսմանը, թէ այդ վարակումը մի ու է «ըզու» պիտի վերադառնա, զանախակց այդ հիւանդի, որոնք բացայայտ ցոյց էին տալիս, որ այդ հիւանդութեան կրողները փոքրիկ էակներ են—բացիլները: Շատ վախճանները՝ արձաւուր մօրց ունեցած չափազանց երկիւղը անտեղի է. արձաւուր միւր շատ դժուար է հիւանդանում տուբերկուլոզով և օրինական ճանապարհներով ձեռք առած զգուշութիւններով, եթէ դրանք ընդհանրապէս, կարելի կը լինի ազատ համարվել այդ վտանգից: Մասնոցները և մանաւանդ մասնաւոր մասնոցները խիստ կոնտրոլ պիտի ենթարկվեն: Խիստ ուշադրութեան արժանի է ընդհանրապէս կովկասի տուբերկուլոզը, որովհետեւ մի հիւանդ կովկացի ամբողջ գիւղեր կարող են վարակվել նրա կաթի միջոցով: Արմատական լաւ միջոցն է բոլոր հիւանդ կովկասի սպանելը: Պէտք է ենթարկել բոլոր ընտանի անասունները, որոնց կաթը մաքուր գործ է անում, տուբերկուլին—փորձի. հում կաթը ստերիլիզացիայի ենթարկելուց յետոյ, արտօնել ծախելու: Խոզերի մէջ երևան եկած յաճախակի տուբերկուլոզը հիւանդութիւնների վրա, ինչպէս նաեւ գեղձերի տուբերկուլոզը, հարկաւոր է աւելի ուշադրութիւն դարձնել, քան մինչև այժմ այդ վրէժն է: Մինչև հիւսիս բերված փաստերը տուբերկուլոզի ժառանգականութեան մասին բոլորովին անհիմն են. կարելի է միայն և եթ վարակվելով ստանալ և հետեւաբար զգուշանալով ևս ազատ մնալ տուբերկուլոզից:

VI

Կոնգրեսի այս նիստի առարկան տուբերկուլոզի դարմանելն էր:

Պրօֆէսոր Գորշման զեկուցանում է տուբերկուլոզի դարմանելն մասին: Նա ասում է. թրքախօսի բժշկելը, ամենախիստ գիտական մեղքը, հաղուազելու դէպքերից է, բայց հիւանդութիւնը սահմանափակելը, նոյն իսկ մեծ չափով մեղմացնելը և կեանքի համար անվտանգ դարձնելը շատ յաճախ է պատահում և արդիւնք է արժատական և խելացի դարմանելու: Շատ շատերը համեմատաբար առողջանում են և դարձնալ աշխատանքի ընդունակ են դառնում: Աղողութիւնները սննդական-ֆիզիքական դարմանում են ձեռք բերվում, գործածելով նաև որոշ դեղեր: Բժշկութիւնը, իսկական մղումը առողջացնելը, այսինքն՝ բացիլները ոչ չեն զոհանում ու անվտանգ դարձնելը դեռ ևս ապագայ ուսումնասիրութիւնների առարկայ է: Աղողութիւնը անհատական յատկութիւններից շատ է կախված՝ նպատակաւոր է շուտով ճանաչելը: Նոյն իսկ հնարած հիւանդութիւնները կարելի է առողջացնել, զոնէ համեմատաբար առողջացնել: Այնպիսի նշանակութիւնը, ինչպէս առաջ կարծում էին, այնքան մեծ չէ. հարկաւոր է թարմ, մաքուր օդ և ոչ խիստ փոփոխական եղանակներ: Կենդանի արտաքին, աղող պայմանները նպաստաւոր են առողջանալուն: Ծախելու օրերի հիւանդութիւնը համեմատաբար աւելի հեշտ է բժշկել: Սեռերի տարբերութիւնը այնքան միայն նշանակութիւն ունի, որքան նրանց ապրելու արտաքին պայմանները տարբերվում են:

Տուբերկուլոզը դեղերի միջոցով դարմանելու մասին խօսում է պրօֆէսոր Գօբերտ: Չը կայ մի ապահով և իսկական դեղ,

բայց առանց դեղերի բժշկելը անհնար է: Ապա ըննադատում է գործածված դեղերը:

Պրօֆէսոր Բրիդար թոքախօսը տուբերկուլոզի միջոցով դարմանելու մասին է խօսում: Նա ասում է, որ տուբերկուլին գործածութիւնը չը պէտք է անտես առնվի: Տուբերկուլինը խիստ արժէք ունի և հիմնված է գիտական փորձերի վրա: Տուբերկուլին-փորձերը սատարի չանկան են և բժշկները վախճանալու ամենին աւելի չունեն: Տուբերկուլինի խելացի գործածութիւնը իբրև դեղ միշտ լաւ հետևանք է խոտանում, զոնէ համեմատաբար առողջացնում է:

Սըր Հերման Վէլքեր չօչափում է տուբերկուլոզի կլինիկական դարմանումը: Հիւանդներին բուժարաններում դարմանելը բընականաբար առաւելութիւններ ունի. միջոցից դուրի անձանց անհրաժեշտ է բուժարաններում դարմանելը: Տուբերկուլիններին ամեն կլինիկական կարելի է բժշկել, բայց երբեմն զանազան կլինիկական առաւելութիւններ են ներկայացնում. բայց միայն կլինիկական, առանց բժշկական դարմանի, չէ օգնում, այլ և յաճախ կը վնասէ: Այդ պատճառով մեծամասնութեան համար, մասնաւորապէս մեծամասնութեան համար, բուժարաններում դարմանվելը մի անհրաժեշտութիւն է:

Իր. Դէյվիլլէր մի մանրամասն զեկուցումն է տալիս թոքախօսի առողջապահական սինդրոմի դարմանի դարմանի մասին, և ասում է, որ այս տեսակ դարմանումը մինչև այժմ ամենալաւ արդիւնքն է տուել: Մի լաւ վարժ բժշկի հոգածութեամբ կառավարված բուժարանը տուբերկուլոզի դէմ կուրու ամենաառաջին պայմանն է:

Ապա մի շարք ճառախօսներ մէջ են բերում մի բանի մանրամասնութիւնները այս ժողովի զբաղման առարկայի վերաբերեալ:

Կէսօրից յետոյ կոնգրեսի անդամները, երբեք մեծ խումբերի բաժանված, դանապան պրօֆէսորների և քաղաքային պաշտօնականների առաջնորդութեամբ այցելեցին Բերլինի շրջակայում գտնված բուժարանները, Սելթով և Բլանդենֆելդէ, Գրաբովէ և Բէյցե:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Neue Freie Presse» լրագրին Հաագայից հաղորդում են, որ կոնֆերանսային նախագահ Կ. Ստապը հրաժարեց ընդունել հայոց պատուիրակ Մինաս Զէրազին, որը կամենում էր մի յայտագրի ներկայացնել հայոց հարցի վերաբերմամբ: Մի և նոյն ժամանակ Նիդերլանդեան կառավարութիւնը արգելեց Մինաս Զէրազին հրապարակական դատախօսութիւն կարգող նոյն հարցի վերաբերմամբ: Այդ արգելքը տեղի ունեցաւ այն խորհրդակցութիւնից յետոյ, որ ունեցաւ օսմանական պատուիրակ Թուրքիան—հայաւան Նիդերլանդեան արտաքին գործերի մինիստր Բօֆօրի հետ:

«Ալեքսիայի» «Corresp. Bureau» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են հետևեալը. «Նույնից, ինչպէս ասում են, Պետերբուրգ հեռագիր ուղարկեց խորհրդով առժամանակ դադարեցնել Ռուսաստանի գաղթած հայերի վերադարձը Թուրքիա և պատասխան ստացաւ, որ Կ. Պօլսի վերադարձող ռուսաց զեպան Զինովիէվ համապատասխան ջրանցիներ ունի ստացած»:

«Polit. Corresp.» լրագրի Ալեքսիայի թղթախօսը մի բանի մանրամասնութիւններ է հաղորդում այն դաւադրութեան մասին, որ տեղի է ունեցել Կրէտէի ծայրագոյն կօմիսար արքայաւորի Գէօրգիի դէմ: Արքայաւորու ցանկութեամբ, ընդունվելը շարունակվում է միայն զլլաւոր դատաւորների դէմ, որոնք արդէն արտօրված են կղզուց: Ասում են, որ զլլաւոր դատաւորները, որոնք մտադրութիւն ունէին փախչել արքայաւորու Նիս, այն է Զօրիսիս, ութը մասնատականներ էին, որոնցից չորսը Կանդիայի ընդհանրեան են: Կոնգրեսը ինքնաբերական հակառակ է, որ այդ զեպի պատճառով Կրետէի ըրխանեան և մասնատական տարբեր մէջ թշնամութիւնը աւելի ևս սուր կերպարան առաւ: Այդ պատճառով պէտք է հրաժարվել այն յոյսից, թէ նոր բժշկմի հետ կը հաշտվի զոնէ մասնատականների մի մասը, մասնաւորապէս Կրետէի վարչական խորհրդի մասնատական անդամ Հասան-Սիլիօնական բէյն ևս հրաժարական է տալիս: Գաղթականութիւնը շարունակվում է. վերջին շաբաթը Փրքը-Ասիա գաղթեցին 3,600 մասնատականներ:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՈՒԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

28 մայիս

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների ժողով: Դէշանել հաղորդում է, որ իտալական պատգամաւորների ժողովի նախագահից հեռագիր է ստացվել, որի մէջ ցաւակցութիւն և համակրութիւն է յայտնվում:

Վուս Օտելում տեղի ունեցած ցոյցերի առիթով: (Նրկար ծախսարութիւններ): Լազի կամենում է հարցապնդում անել Դեկատէի արտասանած խօսքերի առիթով, որոնք վերաբերում են Պանիցարդիի հեռագրին: (Ջանազան շարժումներ): Դեկատէ յայտնում է, որ Պանիցարդիի հեռագրի թարգմանութիւնը, որը կատարված է եղել Դրէյֆուսի դործի ընդունվելուց 40 օր առաջ, ոչ մի փոփոխութեան չէ ենթարկվել: Մինիստրը դրան ոչինչ չէ կարող աւելացնել: (Մախահարութիւններ): Հարցապնդում ընդունվելու յետաձգված է մէկ ամսով, չը նայելով Լազիի բողոքներին, որին, վերապէս, կարգի են հրաւիրում: Նախօրինակ Պար թոյլտուութիւն է խնդրում հարցապնդում անելու: Լազին, իբրև ցամաքային դործի օֆիցերի՝ ընդիշ յանձնաժողովի դատաստանի ենթարկելու Կրանց, ծախսարութիւնների և բողոքների ժամանակ պատճառաբանում է այն միջոցները, որոնք ձեռք են առնելու Լազիի դէմ, բայց պահանջում է, որ հարցապնդումը յետաձգվի մինչև Լազիի դէմ սկսված ընդունվելու: Առաջարկութիւնը ընդունված է 401 ձայնով, ընդդէմ 166-ի: Թոյլտուութիւնը դառնում է հերթական հարցերին:

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների ժողովը ընդունում է առանց վիճարկութիւնների և բուժարկութեան սենատի այն ծրագիրը, որով թոյլատրվում է ընդունվելու ենթարկվածներին ունենալ փաստաբան ընդունվելու ժամանակ:

ՊԱՐԻԶ: Դեկատէ և Կրանց խորհրդակցութիւն ունեցան դեմքալ Յուրլինդէի և ոստիկանութեան պրէֆէկտի հետ, որտեղ ընդունվեցին այն միջոցները, որոնք պէտք է ձեռք առնվեն կրակի օրը կարգը պաշտպանելու համար:

ՊԱՐԻԶ: Մեղադրական ատենանք որոշում կայացրեց ժամանակաւորապէս ազատել Պիկարին բանտարկութիւնից:

ՀԱՍՏԱՆ: Այն սէկցիան, որը ընդուն է Բրիւսէլի կոնֆերանսային որոշումները, ընդունեց 55-դ յօդուածը հետեւեալ լրացուցիչ պարագրաֆով. «Զէյդը պետութիւնները պարտաւոր են թոյլ տալ, որ իրանց երկրի միջով անցնեն հիւանդները և վերադարձնելու արդիւնքը պէտք է լինի, որ այն կերպ չեն կարող հեռացնել պատերազմի թատրոնի բեմից, և այն պայմանով, որ կուրղ երկու կողմերի հետ էլ միակերպ պէտք է վարվել: Այդ հիւանդներին և վերադարձնելին, ըստի որ նրանք թոյլ է տրված մտնել չէզոք երկրից, չէզոք կառավարութիւնը կարող է յանձնել միայն այն երկրին, որին նրանք պատկանում են»: Ապա սէկցիան սկսեց ընդել թշնամու հողի վրա պատերազմական իրաւունքները:

Ռուսաց պատուիրակ Մարտէն ճանապարհ է ընկնում Պարիզ՝ մասնակցելու յունիսի 3-ին այնտեղ բացվող միջնորդ դատարանի յանձնաժողովի աշխատանքներին՝ բրիտանական Գլիսիայի և Վենցուէլայի մէջ եղած սամանային վէճի հարցի վերաբերմամբ, որից յետոյ Մարտէն կը վերադառնալ Հաագա:

29 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրը որոշեց՝ կրկին թոյլ տալ «Народъ» լրագրի հատուկ վաճառումը:

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների ժողովը, ընդունելով նախ անցեալ զեկուլութիւնը, ընդունեց ապա մի նախագիծ, որով մեղադրող ատենանք սրանից յետոյ չէ կարող դատաւիճանք արձակել, առանց լսելու մեղադրողին և նրա փաստաբանին: ՄԱՐԻԻԻ: Կարկտախառն սաստիկ փոթորիկը մեծ վնասներ հասցրեց: Մի ըստի մարդիկ վերադարձնում են, մէկը սպանված է, մի ըստի տղաներ վնասվեցին: Քաղաքի-խնամակալուհին, որ զբօսանքի էր գնացել, հաղիւ կարողացաւ տուն վերադառնալ:

ԼՕՆԴՈՆ: Համայնքների ժողով: Արտաքին գործերի բիւրօնը ընդունել ժամանակ, Դիլկ առաջարկեց ջնջել հարիւր Ֆուստ, մի և նոյն ժամանակ ընդունել կառավարչական բողոքականութիւնը Չինաստանում և նորերս Ռուսաստանի հետ կայացրած համաձայնութիւնը թոյլ անուանեց: Բօրնֆօրդ—չարունակեց հետեւօրը, — առաջարկում է խաղաղ ապահովութիւն բրիտանական առևտրին Չինաստանում. դրա համար անհրաժեշտ է զօրեղ, որոշ քաղաքականութիւն: Բրօքրիկ պատասխանում է, որ Բօրնֆօրդ, իսկապէս, կամենում է, որ Անգլիայի կոնտրոլ հաստատվի Չինաստանի ամբողջ կառավարչական վրա: Դրա համար միայն երեք մեթօդ կայ, այն է ճնշում: Յղուցի-լի-եմալէի վրա, Անգլիայի տիրապետութիւնը Չինաստանի վրա միւս պետութիւնների հետ միասին, կամ Անգլիայի անկախ տիրապետութիւնը Չինաստանում:

31 մայիս

ՊԱՐԻԶ: Բուլօնեան անտառը իր սովորական

տեղի ունի: Նշանակը գեղեցիկ է: Ցոյց անող-
ները խմբի չեն երևում: Լոնջանում, ուր մեծ
թուղ ճանապարհով լինել է դիմում, արդեն ձեռք
են առնված գրողները միջոցներ: Ամբողջ
մէջ մի քանի սոցիալիստներ են երևում կարմիր
վարդը կրողներ: Սոցիալիստները մի քանի խում-
բեր կանգնած են ջրվեժի մոտ՝ ձիարշախի դաշ-
տի կողքին:

ՊԱՐԻԶ: Այն անձը, որ Լուբեի անցնելու
ժամանակ աղաղակեց «կեցցէ թագաւորը», այն-
տեղ է եթ կայանաւորվեց:

ՊԱՐԻԶ: Առաջին երկու ձիարշախերը Լոնջա-
նում տեղի ունեցան առանց որ և է միջնորդ-
պետի: Իրավաստիական մարմինը անդամները
մէջը միւսի ետևից մօտենում են նախագահա-
կան ամբիօնին: Բոլոր սոցիալիստ պատգամա-
ւորները գտնվում են Enciente du Pesage-ում:
Ջրվեժի մօտ տեղ բռնած ցոյց անողները ող-
ջունում են միմյանքի կողքերին, իսկ շքեղ
կառքեր երևալու ժամանակ լսվում են մի քա-
նի բացառաշուքները՝ «A bas la calotte»:
Տեղի ունեցան մի քանի ձիարշախություններ:

ՊԱՐԻԶ: Ներսիսյան պալատից մինչև Լոնջան
նախագահին ողջունում են անդադար «կեցցէ
Լուբե» բարձրաձայն և ոգևորված աղաղակնե-
րով: Խառնվում էին նոյնպէս «կեցցէ» հանրա-
պետությունը բացառաշուքները: Նախա-
գահի ընթանալու ամբողջ ճանապարհի վրա
ամբողջ հոսանքը բռնում էին ոստիկանները և
ժանդարմները տեղերով: Ջրվեժի մօտ, ուր հա-
ւաքվել էր աւելի ևս մեծ ամբոյն, նոր ոգևոր-
ված ցոյցեր տեղի ունեցան: Նախագահը մօտե-
ցաւ իր տրեքուսին առանց միջնորդակի: Երբ
Լուբե երևաց ամբիօնի վրա, որոտաց «կեցցէ»
հանրապետությունը բացառաշուքները: Լսվում
էին նոյնպէս «կեցցէ» զօրքը աղաղակները,
բայց դրանք քիչ էին:

ԿԱՊՇՏԱՎՏ: Կիմերիէյան հանքերում դիմա-
միտի պահեստում պայթիւն տեղի ունեցաւ:
Սպանված են 17 տեղացիներ, վիրաւորված են
3 եւրօպացի և 27 տեղացիներ:

ՎԷՆԷՐԱ: Ռուսաց բանկի անհետը կորած
գանձապահի դիակը գտան թաղված այն տան
տան մէջ, որը այցելում էին բանկում ծառա-
յող տեղացիները: Մարդասպանները ձերբակալ-
ված են: Գանձապահի հետ միասին դրամարկ-
դից անհետացած բանկային տոմսակների մեծ
մասը գտնված է:

ՊԱՐԻԶ: Երբ նախագահը երևաց Լոնջանի
մուտքի մօտ, Enciente du Pesage-ից զուրս
կանգնած մարդկանց մի խումբ սկսեց աղաղա-
կել: «կեցցէ զօրքը, կրքի Ջօլան»: Տեղի ունե-
ցաւ կռիւ: Մի քանիսն ձերբակալեցին: 4
ժամ 40 րոպէին Լուբե վերադարձաւ: Ներսիսյան
պալատը «կեցցէ» հանրապետությունը, կեցցէ
Լուբե: աղաղակները ուղեկցութեամբ: Ոչինչ
ինքնիշխանի տեղի չունեցան:

ՊԱՐԻԶ: Պարզամտներ անդամները շատերը
ուրախանում են, որ ոչինչ անհերքաշնակութիւն
տեղի չունեցաւ, հաւանութիւն են տալիս կա-
ռավարչական ձեռք առած միջոցներին և գո-
վում են աղգաբնակութեան ցոյց տուած խոն-
մութիւնը: Սոցիալիստները պարագլուխները,
մանաւանդ Ժօրէս, խորհուրդ էին տալիս բա-
րեկամներին չափաւոր լինել:

Բուլվարների վրա մեծ կենդանութիւն է տի-
րում: Մի քանի մարդիկ ցոյց արեցին «Libre
Parole»-ի դէմ: Ոստիկանութիւնը առաջարկում
է հասարակութեանը ցրվել:

ՊԱՐԻԶ: Հանրապետութեան նախագահը Լոն-
ջանից գնաց «կեցցէ» Լուբե: աղաղակները ու-
ղեկցութեամբ: Լսվում էին նոյնպէս «կեցցէ»
Ջօլա, կեցցէ Պիկար: բացառաշուքները:
Երբ երևաց Դէլկասէի կառքը, նրան մի ահա-
զին ցոյց արին: Ամբոյնը, չբացատրելով մի-
նիստերի կառքը, աղաղակում էր «Թող կորչի
բէֆօրմը: կեցցէ Դէլկասէ: Թեղ ենք Դէլկասէ-
ի վրա: Մնացած միմյանքներն ևս ցոյցերի
աւարակալ դարձան, մանաւանդ Կրանց: Մա-
նաւանդ շերմաղին ցոյցեր արին Լուբէին, երբ
նա գնում էր ջրվեժի երկարութեամբ: Ոստի-
կանները չլիթան պատռեցին. ամբոյնը մօտե-
ցաւ նախագահական կորուէթին աղաղակելով
«կեցցէ» Լուբե, կեցցէ հանրապետությունը, կեցցէ
Պիկար: Դաշտի վրա այդ ժամանակ մի քանի
ընդհարումներ տեղի ունեցան առանձին ան-
հատներ մէջ: Ոստիկանական ազնոյաներից ե-
րեքը, որոնք կամենում էին կալանաւորել ցոյց
անողներին, վիրաւորվեցին: Կալանաւորված
անձերից միայն ութը բանտարկված մնացին:
Ժօրէսը և սոցիալիստները, հաւաքվելով արէ-
մէնօնիլիան պալիլիօնի առաջ, սկսեցին երգել:

յեղադիտական կարմանիօլ երգը: Կաֆէում
գտնվող հասարակութիւնը պատասխանեց «կեց-
ցէ զօրքը» բացառաշուքներով: Վերջը կռիւ
սկսվեց:

ՊԱՐԻԶ: Ներկայիս 5 1/2 ժամին տուր ու-
ղմից սկսվեց արէմէնօնիլիան պալիլիօնի ա-
ռաջ. այդ կռիւի մէջ 5 մարդիկ ծանր կերպով
վիրաւորվեցին: Ներկայիս 6 ժամին մի քանի
հազար մարդիկ Ներսիսյան դաշտերի վրայով դե-
մեցին դէպի Ներսիսյան պալատը և պատիւ Լու-
բէի և հանրապետութեան կեցցէներ աղաղակելով:
բայց ոստիկանութիւնը ցրվեց նրանց, կալանա-
ւորելով մի քանի անձինք: Ներկայիս 7 ժամին
ցոյց տեղի ունեցաւ «Intransigeant» լրագրի
խմբագրութեան առաջ, բայց ոստիկանութիւնը
ցրվեց ցոյց անողներին: Մի քանի ժողովաւորա-
ներ ձեռք կերպին, ապա կալանաւորվեցին և ու-
ղաւորվեցին ոստիկանատուն:

ՊԱՐԻԶ: Այս արժանահաւատ պատմութիւն
արէմէնօնիլիան պալիլիօնի առաջ տեղի ունե-
ցած ինքնիշխանի մասին. երեկոյեան 5 1/4 ժա-
մին կաֆէին լիքն էր այցելուներով: Դրանցից
մէկը ինչ որ անվայել նկատողութիւններ էր
անում Լուբէի հասցէին: Մնացած այցելուներից
մի քանիսը սկսեցին թեք, իսկ մի քանիսը
նրա դէմ խօսել: Խօսքերով վիրաւորանքներ հասց-
նելուց յետոյ սկսեցին փայտով հարուածներ
հասցնել միմեանց, ապա սկսեցին միմեանց վրա
գցել բաժակներ, շիշեր և, վերջապէս, արժու-
նեք և սեղաններ: Նոյն այդ ժամանակը ցոյց
անողների խումբը, կրքներին կարմիր վարդ
կրելով, իմանալով թէ ինչ կատարվում, սկսեց
աղաղակել «կեցցէ» հանրապետությունը, «A bas
la calotte»: Պալիլիօնը ենթարկվեց կանոնաւոր
պաշարման: Հաւաքվեց մի քանի հազար մարդ,
որոնք կտորեցին պատուհանների փեղկերը այն
ժամանակ, երբ պալիլիօնի ներսը կռիւը շա-
րունակում էր: Մի քանի մարդիկ վիրաւորվեցին:
Վախեցած հասարակութիւնը փախաւ կաֆէից:
Կաֆէին փակվեց:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՆԻՐ ԲԱՆԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՍԵԼԻԲ-ԱԳԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Ստեփան Բարսեղեան

Տ Ե Ր - Մ Ի Բ Ա Յ Է Լ Ե Ա Ն Ց

(Բազուկից)

Նախկին 6 տարիների պէս, այս տարի էլ ա-
մառվայ ամիսները պարագլուխ է բռնվում:
Ժէլգնօւօղսկում, Բեյեմսկոյ աւարանոցում:
1—3

Մ Ի ՀԱՇՈՒՆՊԱՆ

տեղ է որոնում: Ցանկացողները թող դիմեն՝
Սիօնի փողոց, Տէր-Յակովբեանի խանութում:
(Ե. Տ.) 1—2

Ծ Ա Խ Վ Ո Ւ Մ Է

Գրաֆական փողոցում, Նարմուկայի մօտ, ա-
ռաջ-բանայ Ելիօղլի ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՏՈՒՆԸ.
№ 10. Տան վրա բանկի պարտք կայ մօտ 14
հազար ռուբլի: Պայմանների մասին դիմել նոյն
տան մէջ, Ելիօղլի խանութում: (Ե. Տ.) 1—2

Թ Ի Բ Բ Ե Տ Ը Ն Ի ՀԱՆՈՒՐ Հ Ի Բ Ա Տ Ո Ս

Է Ս Ա Դ - Բ Ե Ց Ս Ո Ւ Գ Տ Ի Զ Ա Դ Է

ստանալով արձակուրդ՝ գնաց Կ. Պօլիս: Նրա
տեղ նշանակված է ՆԱՓԻԼԵՆ ԷՖԷՆԴԻՆ,
որը արդէն ստանձնեց իր պարտաւորութիւնը:
1—3

Յունիսի 1-ից, 2 ամսով արտասահման գնա-
լու պատճառով, նշանակված է

Է Ս Ա Ն Վ Ա Ճ Ա Ռ ՈՒ Մ Ն

բոլոր պատրաստ չընդ ձեռագործներ

Ֆ. ԿԱՍՍԻԼԻ

մագաղանում. Դիօրցօւօյա փ., Նախկին Ար-
ծրուտը քարավանատար (Ե. Տ. Ե.) 3—3

Բ Է Ժ Ա Ն Ե Ա Ն Ն Ե Ր Ի

խանութը Արասթումանում փոխադրվեց
սեփական շինութեան № 15 և 16-ի
մէջ: (Ե. Տ. Տ.) 3—3

HUILE d'OLIVE BESSEDE

Իսկական պրօվանսայի իւղ ԲԵՍԵԴԵ, բոլորովին մաքուր, առողջ և ամենալա-
տեսակից: Խնդրում են չնդունել այնպիսի շիշեր, որոնց գրութիւնները վնասված են կամ
չունեն ստորագրութիւն: Զգույշ կենալ կեղծումից, որոնք աշխատում են նմանացնել
դրոշմը կամ շիշի ձեւը: Իսկական ԲԵՍԵԴԵ իւղը, Մարսէլիայից (Ֆրանսիա) փաճառվում
է ամեն տեղ:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}

ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՑՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
և հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մօնելով Տրապիզոն, Սամսուն և Պօլիս: Մեկնում է Բաթու-
մից՝ չորեքշաբթի, 9/21 յունիսի ԱՆԱՏՈՒ չորեքշաբթի, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ պայպէս
չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ձախից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակները տրվում են անմիջապէս:
պակաս դնելով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործադատարներին:
ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արնօն, Նաբէլէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիօնի փող. Խօջափարութօւլի և Մայսուրաձէ քարվանսարա: ԲԱԹՈՒՄ—պ. Ս. Իրարեանին
Կօրնքիակինմայա հրապարակ: ՆՕՎՕՐՕՐՕՍԻԹՅԱ—պ. Մեկսիօր Հերշեյօղերին:
(Ե. Տ. Տ.) 20—20

ՀԱՅԹԱՑԹՈՂ
ԲԵՐԶԵԳՈՒՆ
ՊԱԼԱՏԻ

Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

Մ Օ Ս Կ Վ Ա

Ծ Ա Ղ Կ Ա Ջ Ո Ւ Ր

ՈՐ ՓՈԽԱՐԿՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՏԱԼԵՑ ԶՐԵՐԸ.

Սրուակը 60 Կ. և 1 ռուբլի:

ԾԱՂԿԱՍԱՊՈՆ (բարձր տեսակից)

8 տեսակ հոտով, կտորը 20 կօպ.

ԺԱՂԱՍՏԻՆ ԳԼԻՑԵՐՍՏԻՆ ՍԱՊՈՆ


8 տեսակ հոտով, կտորը 20 կօպ.

ԹԱԻՀԱՅԻՆ ՊՈՒԴՐԱ

Սրկը 25 կօպ. և 50 կօպ.

Москва, 1) Пассажи Солодовникова. 2) Тверская, д. Спи-
ридонова. С.-Петербургъ, Невскій 18.

Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում:




ԹԻՆԵՐԵԿԱՆ-ՏԵԽՆԵԿԱՆ ԲԻՐՈ

Իմեներ Ն. Բ. Պարսեկի

Тифлис, Мухомоловская ул. № 116.

Հասցին հեռագրիչների համար. Тифлис—
Паскевич.

ՏԵԼԵՖՈՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶՈՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ
և ՏԱԳԱՑՈՒՄԸ

ԳՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍՍԻԵԼ
ա մ են տեսակ

տիւրրիւններ, խողովակներ, շինա-
նեք և ջրհաններ:

Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ
երկաթէ կամուրջներ
և տնակներ:

ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Տ.) 6—100

Գիտարևոտեսական գործիքներ

և մեքենաներ

Լ. ԽԱՆ-ԱՂԱՆԻ

250 նկարով: Գինն է 50 կօպ.

Դիմել՝ Тифлис, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Ե. Տ.) 39—50